

լաին, բացարձակ բարոյն,– ինչպէս եւ չսնուցանէ, չտածէ՝ ու պատկերացման իր զօրեղ միջոցներով հրապուրիչ չընծայէ՝ այնպիսի զգացումներ որ եղած ըլլան բուն լաին ծանօթութեան հետ անհաշտ գաղափարներու ծնունդ։ Հակառակ այդ հիման իրականութեան Սեթեանի մտքին մէջ, ոչինչ կայ արդէն իր գրականութեան մէջ վարդապետական. այնպէ՛ս են միթէ այն քանի մը խօսքերը գորնկարիչ Պետրոս Սրապեանի մէկ կտաւին՝ *Մշեցի աղջկան* բերանը կը դնէ, ուղղելով զանոնք հայ աղջիկներուն։ Կամ այն զմայլելի խօսքերը գոր իր աշակերտներէն իրեն ձօնուած *Վարդապատկի* մը առթիւ կ'ուղղէ անոնց մեծ վայելչօրէն, եւ որոնցմէ է սա տողը.

*ՁԱտուած երբեմըն տեսնել չի լինի՝ ձեզ դժուարին...*

– Կամ մանաւանդ ոչինչ կայ Սեթեանի մէջ հրամանական (dogmatique). այս ամենաքաղցր ուսուցիչը ոչինչ ունի հարկադրիչ յանուն բարոյական սկզբանց, նոյն իսկ իր բանապաշտի տարակոյսներն ու ժխտումներն անգամ կը թուի արտայայտել զգուշիւ, առա՛նց, որքան հնար է, ճոռում ձեւերու կամ մարտահրաւէր վճռաբանութեան։ Ներդաւանութիւն (tolérance) իսկ է Սեթեան։ Եթէ կայ՝ իր մտքին համար անբարոյական բան մը՝ անարդարութիւնն է այն։ Ա՛հ, անաչառ է յայնժամ եւ աներկիւղ, անիրաւախոհ, եւ ահա իր հայերէնագլխտութեան անձաւէն կը հանէ մոայլ շողիւնով մը վատվո՞ւն իր գէնքերն անոր դէմ շանթելու։ Բայց բանաստեղծներու դասական ազատախոհութեամբ աչառու է ինչ ինչ կասկածելի ողջմտութեամբ ընթացքներու որ սակայն է՝ ապէս այլալմաստ չեն թուիր։ Կարծես կը դաւանի մեղապարտ անբարոյութիւններ եւ անմեղ անբարոյութիւններ. այս վերջիններն ի նպաստ խեղճերու, ինչպէս այն միւս առանձնաշնորհեալ խեղճերուն որ երիտասարդներն են... Եւ սակայն պարկեշտ ու խոհական է Սեթեանի երեւակայութիւնը, ամէնէն փայլունն իր մտաւոր կարողութեանց, եւ զօրեղագոյնը։ Վիպային տեսիլներու երեւակայութիւն մը, հրեշտակային